



un. 1996



1525-147

Printed in Turkey 3723 4-2

ՄԱՐԳ ԿՈՒԹՈՒՆ

17

*S. 64*

ՀՐԱՄԱՆԱԻ

ՏԵԱՌՆ ՄԱՏԹԵՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ

ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍԻ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ

ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

= 1848 =

17  
S-64  
47

Printed in Turkey

2004



977  
39

Printed in Turkey

256

Ի յիշատակ հոգեւոյս  
կարապետ աղայի Տիւղիթ  
Ճիւղան :

Ի յիշատակ հոգեւոյս

Printed in Turkey

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.





իր տղին մարդ չես ըլլար կ'ըսէ  
եղեր, տղան փոխարքայ եղեր է.  
Հայրը շուտով յանցաւորի պէս  
բռնութեամբ բերել տուեր է և  
ըսեր է, Հայր դուն ինձի մարդ  
չես ըլլար կ'ըսէիր, նայէ փոխար-  
քայ եղայ. Հայրը պատասխան  
տուեր է. ես քեզի փոխարքայ չես  
ըլլար չըսի, մարդ չես ըլլար ըսի.  
փոխարքայ եղեր ես, բայց մարդ  
չես եղեր, ինչ օգուտ:

Փնտռած մարդկութիւնն ոչ  
իշխանութեամբ ոչ հարստութե  
և ոչ գիտութեամբ կ'ըլլայ, իրաւ  
գիտութիւն մարդկութիւնը ին-  
չով ըլլալը կը սորվեցընէ, բայց  
մինչեւ սորվածներովը մարդ ին-  
քրզինք չի վարժէ նէ, գիտու-  
թիւնը անօգուտ է: Մարդկու-  
թիւնը բոլորովին գիտութեան  
կարօտ չէ. հասարակութեան մէջ

եղած բարոյական խրատներով  
մարդ ինքրզինքը կրնայ կրթել :  
Վիտնական և ամենահմուտ մարդ  
մը իր բոլոր հմտութիւնովն ալ  
անկիրթ և բարոյականութենէ  
զուրկ կրնայ ըլլալ : Ասոր զարմանք  
պէտք չէ , ես որ այսպէս դատում  
ներ կ'ընեմ և բարոյական խրատ  
ներ կը գրեմ , մինչեւ հիմա բա-  
րոյականութեան մէջ ինքրզինքս  
կատարեալ կրթած չեմ : Օյլս  
խրատեմ և ես ինքնին անփորձ  
եմ : Բայց իմ գրածներս կարդա-  
լով շատերը ինձմէ կատարեալ  
կրնան ըլլալ . այն յուսովը կը  
գրեմ :

Վանք հիմա մարդկութեան  
ինչ ըլլալը հասկըցրենեք , մարդ-  
կութիւն ըսելով կ'իմանամ բա-  
րեւիտ , բարեգործ , առատաձե-  
ռըն և վեհանձն ըլլալ . հարստու-

Թիւնը՝ բարեգործու թիւն ընե-  
լու համար, պատիւը՝ հայրենի-  
քին ծառայելու մտքով, իշխա-  
նու թիւնը՝ մոլոր թիւնը սանձե-  
լու, և առաքինու թիւնը պատ-  
ուելու ջանքով ուղեւ, առանց  
անապարծու թեան աղէկ մարդ  
ըլլալ, աղքատու թիւնը ազնու ու-  
թեամբ, նախատինքը համբերու-  
թեամբ տանիլ, իր սխր և քէնը  
ջնջել, իր թշնամիէն վրէժ առ-  
նելու կարողու թիւն ունենալով,  
անոր բարերարու թիւն ընել,  
հասարակաց օգուտը ամէն բա-  
նէն նախամեծար բռնել, իր շա-  
հը, իր հանդստու թիւնը և իր  
պատիւը հասարակաց աղէկու թի-  
ւնելու համար զոհել, ահա ճշ-  
մարիտ և կատարեալ մարդկու-  
թիւնը այս է :

ՅՕԴՈՒԱԾ Բ .

ՄԱՐԴՈՒՍ ԱՄԵՆ ԱՅ ԱՐԿԱՒՈՐ  
ՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդուս գլխաւոր յատկու-  
թիւնները բարեւրտու թիւն , գի-  
տու թիւն և արիւ թիւն են :

Բարեւրտու թիւը ուրիշինն եր-  
ջանկու թեանը ձեռնտու ըլլալու  
սիրելի բնաւորու թիւն մի է . և  
բոլոր բարոյականու թեան սէր  
մըն է : Այս զգացումը լուսաւո-  
րեալ ջըլայ նէ , տկարու թեան  
կը փոխալի , ծուռ կը դատէ , ա-  
զէկ դիտաւորու թեամբ գէշ  
բաներ կ'ընէ :

Ազէկու թիւն ուղեւը և խե-  
լացի ըլլալը բաւական չէ . բանը  
գործադրու թիւնն է , որ այս ալ

արիուէ կարօտ է : Տկար մարդը  
դժուարութեան հանդիպելուն  
պէս երկու բանի համար ետ կը  
քաշվի . մէյմը հասարակութեան  
կարծիքէն կախուած է , որ ինքը  
գէշ մարդ չիկարծեն . երկրորդ  
իրեն շահին և ապահովութեանը  
կապուած ըլլալով՝ արիաբար ա-  
ռաջ տանելու գործքերը ետ կը  
ձրգէ :

Առանց բարեօրտութեան և  
արիութեան լուսաւորութիւնը  
պարտապ զարդ մըն է . առանց լու-  
սաւորութեան և արիութեան ,  
բարեօրտութիւնը անօգուտ զգա-  
ցում մըն է :

Առանց բարեօրտութեան և  
լուսաւորութեան , արիութիւնը  
վնասակար բաներու ձեռք կը զար-  
նէ , անոր համար ասոնց ամէնը  
մէկ տեղ գտնելիլը ամենահար-

կաւոր է : Աւրիշ ամէն գովելի  
յատկութիւնները , այս երեք  
գլխաւոր յատկութիւններէն կը  
ծագի : Փիլիսոփային մէկը այսպէս  
բաժանում մը կ'ընէ , բարեսրբ-  
տութենէ կը ծնանի գութ , որ  
մեր վիշտերուն վրայ կը ցաւի ,  
ողորմածութիւն որ մեր պիտոյ-  
քը կը հոգայ , արդարութիւն և  
ուզողութիւն , որ մեր իրաւուն-  
քը կը յարգէ , երախտագիտու-  
թիւն , որ իրեն եղած աղէկութե-  
ն յիշատակը սիրտը կը շարժէ :  
Արդաւարութիւն որ սիրելի բե-  
լալու աշխատելով մեզի զուար-  
ճութիւն կը շնորհէ :

Վիտութենէ կը ծնանի խոհե-  
մութիւն , որ խելքով կը դատէ  
և գժուարութիւնները առաջվը-  
նէ տեսնալով յաղթելու ճամբայ  
կը գտնայ : Աերողամտութի , որ

յանցանքները փորձութիւն սե-  
պելով կը ցաւի և կը ներէ . վե-  
հանձնութիւն , որ միշտ ինքրդին-  
քը ճշմարիտ յարգութիւն ստա-  
նալու կը յօժարեցընէ . չափաւո-  
րութիւն , որ չափազանցութեան  
առաջը կ'առնէ և սխտոյքը կը  
քիչցընէ . սպարզութի , որ սպառ-  
կեր ճշմարտութեան է . մեծանձ-  
նութիւն , որ յարգը և սպառիւը  
չահէն աւելի կը բռնէ . հնազան-  
դութիւն , որ քաղաքական կանան-  
ները յարգելով ընկերութեան  
բարեկարգութիւնը կը սպահանէ :

Սուսաւորեալ արիութիւն կը  
ծնանի , կիրքերուն վրայ իշխել .  
հաւատարմութի , որ խորաման-  
կութիւնը անարժան կը համարի .  
չահախնդիր չըլլալ , որ նուա-  
տութեան հակառակն է . անկեղ-  
ծութի , որ սխտանի ճշմարտու-



Թիւնք խօսելու ամենեւին չի  
վախնար. փոյթ՝ որ աշխատութե  
պատուը կը շատցնէ. հաստա-  
տութիւն և անփոփոխութի, որ  
գովելի գործք մը առաջ տանելու  
կը յարատեւէ. համբերութիւն,  
որ արդիւելու կարողութիւն չու-  
նեցած թշուառութիւնը համ-  
բերութեամբ կը տանի. աներ-  
կիւղութի, որ վաանգի մէջ միշտ  
հանդարտ կը կենայ. հայրենասի-  
րութիւն, որ հասարակութեան  
օգուտէն ուրիշ բան չի մտածեր.  
Քաջութի որ ինքըզինքը կը զոհէ :

Բարեսիրտ շատ կը գտնելի.  
բարի և լուսաւորեալ մարդ քիչ  
է, բայց բարեօրտութիւնը գիտութիւն  
և արիութիւնը մեկտեղ գտնելը  
հրաշալի բան մի է : Աստարեալ  
խոհեմութիւնը այս երեք երե-  
ւելի յատկութիւններէն կը ծա-

գի, ասոնց մէկը պակաս ըլլալուն պէս խոհեմութեան զուգակը ռութիւնը կ'աւրի: Արիտասարգ, քու արիւնդ փառասիրութեան կրակովը կը բորբոքի. ահա նպատակ մը՝ որ քեզ եռասպատիկ պըսակի կ'արժանացընէ:

### ՅՕԴՈՒԱԾ. Գ.

#### ԲԱՐԵՍՐՏՈՒԹԻՒՆ

Նարեսրտութիւնը և տկարութիւնը մէկզմէկու կը նմանին. տկար մարդը ուզողին կուտայ, դիմագարձութիւն չի կրնար ընել. բայց բարեսիրտը արժանաւորը կը փընտըռէ. շատ անգամ մեծ տղեկութիւն մը ընելու համար քու ուզած պղտիկ և անպիտան բաներուդ դէմ կը կենայ. կամքդ չի

կատարեր . կամքիդ գէմ դնելով  
իր համարումը և պատիւը քու  
քովդ պակսիլը աղէկ գիտէ . բայց  
կամքդ կատարելով տունդ փլցու-  
նելու պատճառ ըլլալը հասկը-  
ցած ըլլալով քու սրտիդ կոտրիլը  
հոգ չըներ . այսպէս պատճառնե-  
րով երեսէ ինկած ըլլալուն սիր-  
աբ չի կոտրիր :

Տկարու թիր՝ գրգռելէն վախ-  
նալով գէմ չի զուրցելուն համար,  
բարեւրտու թեան կը նմանի, գի-  
մադբու թե՛նէն ետ կը փախչի և  
ծառայական հաճիլ մը ունի : Նըշ-  
մարիտ բարեսիրտը քեզի հաճե-  
լու չի նայիր . ինքըզինքը չի մտա-  
ծեր . քեզի օգնելու համար քու  
հաճու թիւնըդ չի փնտրուեր . քու  
աղէկու թիւնդ կ'ուզէ . կեղծ բա-  
րեւրտու թիւնը միշտ մեծամեծ-  
ներէն պատիւ ստանալու կը

նայի :

Ղշմարիա բարեսիրտը կեղծ  
բարեսրտին ցուցուցած առատա-  
ձեռնութիւնը չի ցրցըներ, եր-  
բեմն ագահ կը ձեւանայ, սընա-  
սրարծուիներէ կը փախչի, ծան-  
րութիւն մը և զգուշութիւն մը  
ունի որ ունեցած աղէկութենէն  
կուգայ, երբեմն դաժանութիւն և  
խստութեամբ կը վարվի, աղէկ  
չի հասկըցողները կը զրպարտեն.  
բայց հասկըցողը անոր ծածուկ  
դիտաւորութիւնը պտուղին կ'ըս-  
պասէ : Խօսքով բան չի տեսնար,  
միշտ գործքով կը խօսի, ամէնուն  
սրտին խորունկ տեղը կ'իջնայ,  
ունեցած վիշտերնուն դարման կը  
մատուցանէ :

ՅՕԴՈՒԱԾ Դ .

Գ Ի Տ ՈՒ Թ Ի Ի Ն

Կատարելու թեան հասնելու համար առջի ընելիքնիս, կատարելու թիւնը ինչով կրնայ ըլլալ, ան գիտնալն է : Ամէնէն առաջ մարդ իր միտքը մշակելու է, որ կատարելու թե հասնի . խելքը մշակեալ մարդուն ու տգէտ մարդուն մէջ տեղ այնչափ տարբերու թիւն կայ որ գիտես թէ երկուքը զատ տեսակ են . միտքը մշակելուն միջոցներուն մէկը ուսմունքն է . բայց ընտրեալ ուսմունք մը պէտք է, որ է բարոյական իմաստասիրութիւն : Արքոր մէկ մարդ մը իր խորհրդածութիւնները կարգի դնէ և իրեն սկզբունքները

հաստատէ նէ, ընտիր բնութեան տէր կ'ըլլայ և բարի գործքեր կը գործէ:

Ղշմարիտ գիտութիւնը մարդու առաջնորդ է. որ կեանքներնուս մէջ պատահած մրրիկներէն ազատելու ճամբայ կը ցրցընէ. պարսպ զբօսանքներէն և մոլութենէ մեզ կ'ազատէ. անխելք ծախքեր ընել չիտար. հարստութիւններնուս և առողջութիւններնուս պահապան կ'ըլլայ:

Ղշմարիտ գիտութիւնը՝ գիտնական մարդոց ընկերութեան մէջ կը գտնուի. անոնց հետ խօսակցութիւն ըրած ժամանակդ քաղած պտուղդ ընտրեալ գիրքերուն մէջ չես գտնար. երեւելի գիտնականներուն հետ ընկերութիւն ընողը 'ի հարկէ մեծախորհուրդ և խելահաս կ'ըլլայ. հա-

սարակ և վար մարդոց հետ տե-  
սութի ընտղը միշտ պարապ բա-  
ներու վրայ խօսակցու թիւն ընե-  
լով ժամանակ անցընելէն, տղի-  
տու թե՛նէ չաղատելէն զատ, գէշ  
բնաւորու թեան տէր ալ կրնայ  
ըլլալ: Վիրքերուն ալ աղէկը և  
գէշը կայ. աղէկները ընտրելու  
է. գիրք կարդալն ալ ընկերու-  
թիւն մըն է, աղէկին իյնաս նէ,  
աղէկ կ'ըլլաս. գէշի հանդիպիս  
նէ, ունեցած աղէկու թիւնդ ալ  
կը կորսընցընես. օր մը բարեկա-  
միս մէկը ընտիր մեծագործու թի  
մը ըրաւ. հետաքրքրու թիւն ը-  
րի. հարցու փորձի ինկայ. առջի  
օրը Անեքայ փիլիսոփային խոր-  
հրդածու թիւններէն թուղթ մը  
բան կարդացեր է, ըրած մեծա-  
գործու թեան պատճառը այն է  
էղեր:



Վիչ կարդալու է , բայց աղէկ  
 կարդալու է . մէկ աղէկ գիրք մը  
 մէկ քանի անգամ մտադրու թք և  
 ծանր խորհրդածու թեամբ կար-  
 դալը , հաղարաւոր հատոր գիրք  
 վեր ՚ի վերոյ և առանց խորհրդա-  
 ծու թեան կարդալէն շատ աղէկ  
 է . անկարգ ճամբով շատ մը գիրք  
 կարդալը մարդուն միտքը կը շե-  
 փոթէ . ընտիր հեղինակներուն  
 ընտիր գործքերը կարդալու է :

Ղշմարիտ գիտնականը , շատ  
 մը գիրք կարդացող ու թը ինը  
 լեզուի ծանօթ , հաղարաւոր գիր-  
 քի անուն գիտցող և միշտ գիր-  
 քերէ վկայութիւն բերելով խօ-  
 սողը չէ . ճշմարիտ գիտնականը  
 իր խելքը բանեցընելու կը նայի  
 և միշտ առաքինութիւնը ճշմար-  
 տութենէ չի զատեր : Մտնց մե-  
 կը նպատակ , և միւսը առաջնորդ



կը բռնէ, և երկուքին շուքն ալ  
փրայէն չի դատվիր:

Գիտնական մարդը՝ իր փառա-  
սիրութիւնը հասարակաց օգտին  
համար զսպելու է, հասարակաց  
երջանկուժեան սպառճառ ըլլա-  
լու աշխատելու է, ինքըզինքը  
փառաւորելուն տեղը՝ հասարա-  
կութիւնը լուսաւորելով մէջեր-  
նին երջանկութեան սէր մը ցա-  
նելու է. իր շահին և իր փառա-  
սիրութեան աշխատողը երջան-  
կութեան սպառճառ ըլլալու տե-  
ղը խռովութեան սպառճառ ըլլո-  
ղը՝ ճշմարիտ գիտնական չէ:

ՅՕԴՈՒԱԾ Ե .

ԱՐԻՈՒԹԻՒՆ

Սեղի մահուան ձեռքը տըվող

արիութիւնը մէկ վայրկեանի ա-  
րիութիւն է : Վայց ազնիւ և  
պիտանի արիութիւն մը կայ , որ  
ամէն օր կեանքերնուս մէջ եղած  
պատահմունքները կը տանի : Վ.յս  
արիութիւնը համբերութիւնն է՝  
և առաքինութեան արիութիւնն  
ալ այս է :

Վուսաւորեալ արին հասա-  
րակաց աղէկութե համար շատ  
ներդութիւններու կը մտնայ , ին-  
քըզինքը վտանգի մէջ կը դնէ ,  
ըրած աղէկութիւններուն հա-  
մար շատ մը մարդոց աչքէն կ'իյ-  
նայ , և շատերուն նախատելի  
կ'ըլլայ . ասոնց ամէնը համբերու-  
թեամբ և արիաբար կը տանի ,  
չի յուսահատիր . ձեռք զարկած  
գործքը շերկնչելով առաջ տանե-  
լու կը նայի :

Վարիութիւնը միշտ բարի մար-

դէն չի զատուիր . պատերազմի մէջ  
Թշնամիին դէմ , ընկերութեան  
մէջ հոն չըլլողներուն և ճշմար-  
տութեան տէր կը կենայ :

Բարեգործ մարդը միշտ Թըշ-  
նամի կուեննայ , Թշնամիներուն  
ղրպարտութեանը դիմանալու և  
համբերելու պղտիկուց վարժը-  
վելու է :

Աղէկ մարդը դէշ մարդոց  
Թշնամիի պէս է . դիշերը միշտ  
նեղութիւն տալէն ետ չեն կե-  
նար . կատարեալ բարութիւնը՝  
ասոնց ամենուն ալ արիութեամբ  
համբերելն է :

Ճշմարիտ արին միշտ օգնու-  
թիւն մը կը գտնայ , այս առաջ-  
վընէ հետէ փորձըված է :

ՅՕԴՈՒ ԱԾ. Զ.

ԽՈՒՆԵՄՈՒԹՈՒՆ

խոհեմութիւն իր նպատակին հասնելու համար ներկայ սարազայները՝ կշռելով յարմար կերպիւ մը վարվիլն է. պատմութի կարգալով և սղտիկ բաներու վերայ կարգացածնիս փորձելով, խոհեմութեան վարժրվիլ պէտք է. Միշտ շահն ու վնասը կշռելու է. մեծ շահի համար, քիչ մը բան վտանգի մէջ դնելը խոհեմութի է. բայց սղտիկ և ոչինչ բանի համար մեծ օգուտը չի նայելը անխոհեմութիւնն է.

Վախկոտութե մտեցող խոհեմութիւնը շատ բանի արգելք կ'ըլլայ, մէկ ոտքը մինչեւ ապա.

հով չըլլայ նէ միւս ոտքը չի կու  
խեր . վազելու տեղը կը քալէ .  
վտանգաւոր տեղէ մը դիմաց  
ցաթկելով ազատիլը չիյտէ , վա-  
սին մէջը չիյնալու վախով վտան-  
գի կը հանդիպի , այս ճամբով ա-  
մենեւին դժուարութիւններուն  
առաջը չի կրնար առնել . Գործ  
առաջ տանելու ճամբան գրուցե-  
լիք միջոցներովս կ'ըլլայ :

Առաջ քու նպատակդ նայե  
ինչ պատճառաւ սկսեր ես , թէ  
աղէկ պատճառաւ կամ աղէկ դի-  
տաւորութեամբ է նէ , բոլոր պա-  
րագայները լաւ կ'ըլլան . չէ , հա-  
կառակն է նէ , պարագայներն ալ  
նմանասպէս է :

Ամէն գործքի մէջ առջի բերա-  
նը շարժում մը կուգայ . այն շար-  
ժումը միշտ կիրքով է . միջոց  
տուր որ կիրքդ անցնի , հանդար-

տու թիւն եկամ ժամանակը ընե-  
լիքդ մտածէ :

Չեռք զարկամ բանիդ կարո-  
ղու թեանդ տանիլը , չի տանիլը  
առաջվընէ կշռէ , կրնայ ըլլալ որ  
սխալիս , կարողու թե՛նէդ աւելի  
բանի ձեռք զարկամ ըլլաս , նայե-  
ցար որ քու բանդ չէ , կամ բա-  
նին վերջը գէշ պիտի ըլլայ , ետ  
քաշվէ , սխալելիդ խոստովանէ ,  
ամօթ չէ , սխալելիդ չի ցրցընե-  
լու համար սկսած բանէդ ետ չի  
քաշվելով շատ մը գէշու թի՛ններ  
և անխելքու թիւններ ընելիդ և ս  
առաւել ամօթ է :

Մեծ գործ մը սկսելու ըլլաս  
նէ , երկան բարակ ճամբայ մը  
բռնէ , այս խրատը շատ սուղ ,  
և շատ ժամանակի կարօտ բանե-  
րու օգտաւ որ է , ժամանակի կա-  
րօտ գործք ըլլայ նէ , շարթուան

Մէջ լմննալու բանին ամիս մը միջոց տուր, ստակի կարօտ բաներուն համար ամսըվան մը ընելիք ծախքդ տարիի մը մէջ ըրէ :

Կարելի փորձու թիւնները առաջվընէ աչքիդ առջին բեր. այն վիճակին մէջ ի՞նչ պիտի ընես, հանդարտ մտածէ :

Ի՞նչելիք գործքիդ վրայ շատ երկան մտածէ. ամէն կողմը աղէկ մտածելէդ ետքը՝ օգտակար և անվնաս ըլլալը հասկընալուդ պէս գործքի դիր, ժամանակ մ'անցուներ. աղէկ բանին ետեւէն ինչկիր, ետ մի ձգեր. երբեմն կայնէ, բայց ամենեւին ետ մի փախչիր. ամենեւին գէշ բան չընելու համար միշտ վախցող մարդը, անհնար է որ աղէկ բան մը ընէ :

Աչ պարտաւէն վախցիր, և ոչ գովեստէն ուրախացիր. ըրածիդ

և խօսած իդ պարսաւող ալ կը  
գըտնաս, հաւնող ալ: Առաքինու-  
թիւնը խելացիներուն կը հաւ-  
նեցընես. անխելքները վտանգա-  
ւոր բաները կը գովեն, շարերը  
մողու թիւները կը հաւնին, վախ-  
կոտու թիւնը և կասկածոտու թիւ  
սուտ վտանգներ առաջ կը բե-  
րեն և մարդուն խելքը կը ցընո-  
րեն, դժուարութիւններէ մի վախ-  
նար. մէկ ճամբայ մը բռնեցիր,  
չի յաջողեց, ուրիշ ճամբաներ  
չատ. մէկ ուրիշ ճամբայ մը բըն-  
արուէ:

Ամէն մարդ բռնըվելու կողմ  
մը ունի. և ամէն գործք և ար-  
հեստ աղէկնալու միջոց մը կ'ու-  
նենայ: յամանակները մէկզմէկ  
չեն նմանիր. պարագայները կը  
փոխվին բան մը կը պատահի և  
ուրիշ բաներու պատճառ կ'ըլլայ.



Ժամանակը , արիւութիւնը և խոհեմութիւնը ամէն բան կը յաղթէ :

( ) Գտաւոր գործ մը ունիս , և ան գործէն դուն աղէկ կը հասկընաս , նայեցար որ ուրիշները քեզի հետ աղէկ են , և ըրած բանիդ յօժարամտութի կը ցրցընեն , ժամանակ մ'անցունէր բանդ տես . բայց կը նայիս որ քեզի հակառակ են , բան մը մի կատարեր . անկատար ձգէ , ժամանակ անցուց . ուրիշ բաներ կը ծնանին , և ուրիշ ճամբաներ կը գտնուի . մէկ քանի որ առաջ և մէկ քանի որ ետքը ըլլալով , շատ բան կը գտնայ և մարդուն միտքը կը փոխուի .

( Շատ վաստակաւոր բան առաջարկողին հաւատարմութի միջոցներ . միշտ խարդախները այս ճամբով մարդը կը խաբեն , և վրտանդի կը ձգեն . որչափ շահա-

ւոր բան ըլլայ նէ, աղէկ մը չի  
մտմըտացած վրաց մ'առնէր. մէյ-  
մը վրաց աւիր, խօսքիդ տէր կե-  
ցիր. խօսքիդ տէր ըլլալով յար-  
գըդ կ'եւեւընես, և հաւատա-  
րիմ մարդ կը սեպիս :

Քու ընելիք բանըդ ուրիշի մի  
յանձնէր. բայց ան ալ գիտցիր  
որ ամէն բանը ես ընեմ ըսողը  
չստ քիչ բան կը տեսնայ. մեծ և  
պղտիկ գործքերը ամէնը մէկ տեղ  
տեսնելու կարողութի ունեցող  
մարդ շատ կայ : Բայց այնչափ  
մանրը մունրը բաներու հետ ից-  
նալով կը հոգնի և պէտքի բանե-  
րը հոգալու կարողութի չի մը-  
նար. գործիդ վրայ դնելու աղէկ  
մարդիկ գտիր. հաւատարմութի  
ցուցուր. գաղտուկ բրածնին թո-  
ղածնին նկատէ :

Բողոքովին իշխանութիը դուն

առնեսս և անոնց ինքիրեննին բան  
մը ընելու հրաման չիտաս նէ ,  
անհոգ կ'ըլլան և քու բանոգ ա-  
ռաջ չերթար . անանկ մանրը բա-  
ներ կան որ ժամանակին կատա-  
րելու է , ժամանակ անցնի նէ չի  
կատարիր , և մեծ գործքերուն  
մնաս կուտան . մէկ մեծ մը իրմէ  
սղտիկներուն ընելիք բանը ամե-  
նեւին իր վրայ առնելու չէ . ժա-  
մանակը սղտիկ բաներով կորսըն-  
ցընելու չէ , գլխաւոր գործքե-  
րու նայելու է . բայց սղտիկ բա-  
ները յանձնելու համար հաւա-  
տարիմ մարդիկ ընտրելու է : Սե-  
ծերը անհնար է որ մարդ ճանչ  
նան . մարդոց ամէնն ալ աղէկ  
կերպարանքով գովերնին կը մօ-  
տենան , երեւելի մարդոց գործ-  
քին մէջ անձանօթ մարդ գոր-  
ծած վելու չէ . իրենց պաշտօնին

համար հասարակութեան մէջ  
ինքիբեկնին յարգ և պատիւ ըս-  
տացած , աղէկութեան համբաւ-  
ունեցող , առեւտուրը աղէկ  
վարքը և բարքը գովելի ամենուն  
գիտցած և ճանչցած մարդոցմէ  
մարդ զատելու են . այս ճամբով  
քիչ կը սխալին . իրաւ այսպիսի  
մարդիկ գործածելը անձանօթ  
մարդ գործածելէն քիչ մը սուղ  
կ'ըլլայ , բայց անձանօթ մարդոց  
ամանութիւն ալ շատի կ'ըլլայ .  
Պէշ գործիքով աղէկ գործ չի  
գործըվիր :

Մանր միջոցները մի անար-  
գեր . շատ անգամ մանր մի-  
ջոցները մեծերէն աւելի բան կը  
տեսնան . ժամանակը յաջողելուն  
պէս ատեն մ'անցընէր . բայց ըս-  
պատելն ալ սորվէ . համբերուիլը  
և հանգարտութիւնը շատ մեծ

բաներ կը տեսնան . գէշը այն տեղն է որ , այս երկու խոհեմութեան օգտաւոր յատկութիւնները բնութիւն տուրքն են . և ասոնց ունակութիւնը շատ երկար ժամանակի կարօտ է . կամքով և խորհրդածութիւն ձեռք չի գար :

Պղտիկ թշուառութիւններուն համբերելը սորվէ որ մեծ թշուառութիւններու չի հանդիպիս . արգիլելը անկարելի եղած գէշութիւնները ուրախութեամբ տար . կամ մի գծգոհար :

Յետին վիճակի մէջ ես . այն ժամանակը համարձակութիւն բանեցուր . ինքըզինքդ բաղդին յանձնէ . կրնայ ըլլալ որ տակը վրայէն աղէկ ելլայ . կորսնցընելու բան մը չունենալու գ համար վաստակելու յոյս կրնաս ունենալ . անանկ վիճակներ կան , ուր խոհե-

մուժիւն սեպիւած սովորական միջոցները չեն յարմարիր :

Խոհեմուժե՛ կանոնները ետ մի՛ ձգեր . բայց բողորովին ալ աւոնոնց մի կապովիր . դաղտուկ ձեռք մը կայ որ պատահմունքներուն աղէկ կամ գէշ ըլլալը կը կարգադրէ :

Ամէն մարդ իր գործին յաջողութիւնը իր խելացութեանը կուտայ . շատերուն գործին առաջ երթալուն պատճառը իրենց խելացիութենէն չէ , դիպուածով է :

Հասարակութիւնը ամէն մարդուն խելքը բռնած գործքին յաջողելէն չի յաջողելէն կը դատէ . գործքը առաջ երթողին խելացի է կ'ըսէ . գործը չի յաջողողին անխելք է կ'ըսէ . չիյտէ որ այս ինչ մարդը իր գործին յառա-

Չարիմուժեան համար ամենևին  
խելք բանեցուցած չէ . մէկ ու-  
րիշ մըն ալ շատ խելք բանեցու-  
ցեր է , բայց բաղդը չէ յաջողեր :

Յաջողութիւն ձեռք ձգելու  
որչափ խոհեմութի պէտք է նէ ,  
ձեռքդ եղած յաջողութիւնը չի  
կորսնցընելու համար եւս առա-  
ւել պէտք է . ամէն անգամ խո-  
հեմութիով չի վաստրկվիր , երբե-  
մըն պատահմամբ կ'ըլլայ . Բայց  
պատահմամբ վաստրկածդ խոհե-  
մութեամբ կրնաս պահել . խո-  
հեմութիը վաստրկելէն աւելի ,  
ծախք ընելու համար պէտք է .  
ձեռքդ ինկած յաջողութիւնը խո-  
հեմուէ ուրիշ բանով չի պահ-  
վիր . յաջողութիւնը երբեմն բաղ-  
դով կ'ըլլայ , բայց ձեռքէ չի հա-  
նելը միշտ խոհեմութբ կ'ըլլայ :

Արկու բարեկամով լրմննալիք

գործդ դատաւորի մի ձգեր, դատատանի կարօտ գործքերը անգամ բարեկամի ձեռքով լրմնցընելու նայէ՛ . այս ճամբով միշտ կը վաստըկիս . դատաստանը կասկածելի բան մի է . շատ անգամ իրաւունք ունենալով ալ դատդ կը կորսնցընես , դատաւորի դուռ խնալով շատ տուներ փլեր է :

Գործի մը սկսած ժամանակդ ան գործին ծանօթ մարդոց խրատը մըտիկ ըրէ . ամէն բանին վարպետը կայ . վարպետին հարցուր . որչափ խելացի ըլլաս նէ , փորձառու մարդոց շափ շես կըրնար գիտնալ . շատ բան կայ որ խելքով չի գտնուիր , փորձը կը սորվեցընէ :

Գաղտնիք պահելը ամենահարկաւոր է . մեծ գործ մը պիտի տեսնաս , կատարելը աղէկ գի-



տեսս , տարակոյս չունիս . մարդու  
մի զրուցեր , բայց երեւելի գործ  
մը առաջ տանել կ'ուզես , կա-  
տարիւնըն կասկած ունիս , ա-  
ռաջ երթալը խելքդ չի կտրեր ,  
ամենուն հրատարակէ , այս ճամբ  
քով կողմնակից կը վաստրկիս , և  
կրնայ ըլլալ որ անկարելի կարծը-  
ված բանը կարելի ըլլայ :

Աւրիշին գործին մի խառնըվիլը  
ըսելը , ռամկական խօսք է . միշտ  
վատ և տկար մարդոց խրատը այս  
է : Ա՛մէն որ անանկ միջոցներ կը  
պատահին որ այն միջոցներուն  
ուրիշէ գործի խառնըվիլը , մար-  
դուս ամենահարկաւ որ պարտքն  
է , անմեղ և տկար մարդոց գոր-  
ծը տեսնելը առատասիրտ մար-  
դոց կ'իյնայ :

Ա՛մէնուն քով յարգ վաստրկե-  
լու համար խորամանկութիւնին

մեծը ինքըզինքը յարգելի ընելու  
պէտք եղած աղէկու թիները ու  
նենայն է :

Խոհեմ մարդուն մեծ վարպե-  
տու թիւնը միշտ բանին գործին  
մէջը շիտակու թիւն բանեցընելն  
է . փորձը և խորհրդածու թեամբ  
պատմու թի կարդալը խոհեմու  
դպրոցն է :

## ՅՕԴՈՒԱԾ Ե .

### ՊԼՏՄՈՒԹՒՆ

Մարդոց ինչ ըլլալը հասկընա-  
լու համար գործքերնին տեսնա-  
լու է . կեանքերնուն մէջ գործ-  
քերնին չի տեսնըվիր , խօսքերնին  
կը լսվի . բայց պատմու թեան մէջ  
մերկ կը տեսնանք . սիրտերնուն  
անցածը պատմու թիւնը մեզի կը

սորվեցրնէ . զրուցածնին գործ-  
քերնուն հետ բաղդատելով ինչ  
ըլլալնին և ինչպէս երեւիլ ու-  
զելնին կը հասկընանք . որչափ ին-  
քըզինքնին ծածկեննէ , այնչափ  
ազէկ կը ճանչցըվին :

Պատմութիւնը մարդուն բան  
կը սորվեցրնէ . մարդիկ միշտ ա-  
մէն ժամանակ և ամէն տեղ մէկ  
բնութեան տէր են . բնութիւնին  
և կիրքերնին տարբեր չըլլալով  
միշտ գործքերնին մէկզմէկու կը  
նմանին . ամէն մարդուն գլխուն  
եկածը հազարաւոր անգամ ու-  
րիշներուն եզերէ և պատմութե  
մէջ գրվեր է . պատմութի կար-  
գացողը հազարաւոր անգամ այն  
բաներուն մէջ գտնելով և ամէն  
մէկ անգամին մէյմէկ միջոց գոր-  
ծածած մարդու կը նմանի . բան  
մը պատահելուն պէս վերջը ուր

երթալը կը հասկընայ , և կարդի  
գնելուն միջոցներուն որը աղէկ  
է նէ այն կը գործածէ :

Մարդ ճանչնալու համար լոկ  
պատմութիւն կարդալը այնչափ  
օգտաւոր չէ . այլ բուն իսկ գործ-  
քերուն պատճառները քննելու  
հասկընալու է . այս քննութիւնը՝  
մարդուս կրթութեանը շատ օգ-  
տաւոր է :

Պլուտարքոս մանրամասնա-  
բար երեւելի մարդոց պատմու-  
թիւնը գրելուն համար , երիտա-  
սարգներուն աղէկ դպրոց մըն է ,  
երեւելի մարդիկը մանրը մունրը  
բաներուն մէջ կը նկարագրէ . այս  
մանր մունր բաներն են որ երի-  
տասարդը կը կրթեն :

Ընաքինի Ղիւռէն երեւելի  
սպարապետը ամառ օր մը ձեր-  
մակ բաճկոն հագած և գլուխը

«սիր-Ֆայով իր սենեակին պա-  
տուհանը կայներ է, սպասաւոր-  
ներէն մէկը վրայ կուգայ. հա-  
գուստէն խոհագործին մշակը կը  
նմանցընէ, որուն հետ մտերմու-  
թիւն ունի եղեր. կամացուկ մը  
կը մօտենայ, ծանրը ձեռքով մը  
ետեւին մէյմը կը փակցընէ. զար-  
կած մարդը շուտ մը ետին կը  
դառնայ. սպասաւորը իր տիրոջը  
երեսը տեսնալուն պէս դողով  
տէր իմ ես յօռժը գիտցայ կ'ը-  
սէ, ոտքը կ'իջնայ. Վիւսին զօ-  
րադեալը ետեւը քերելով մէյ-  
մըն ալ յօռժը բլլայ, այսպէս  
ուժով զարնել պէտք չէր կ'ըսէ,  
եւել բան չի խօսիր :

Այս երեւելի մարդու մը պաշ-  
տօնատար էի. այս երեւելի ան-  
ձը օր մը տկարութիւն ունէր,  
առջի իրիկվընէ ինձի վաղվան հա-

մար ապուր ապրսպրբեցէք, ու-  
րիչ բան ուտելու չեմ ըսաւ. ա-  
ռաւօտուն մատակարարը ա-  
պուրը տաք մնալու համար կրա-  
կին քոյն է դրեր. ապուրը բարձր  
աստիճան տաքութե՛ հասեր է,  
չի նայելով առաւ առջին տարաւ,  
ես ալ հոն կայներեմ, այս անձը  
դգալը բերանը տարաւ, բերա-  
նը երեցաւ, և պողունքները ու-  
ռեցաւ. մատակարարին գոյնը  
մոխիր դարձաւ. թի երթալը աչ-  
քը առաւ. նայելու չէք մի, իմ  
բերանս պղինձէ՞ է մի ըսաւ. ու-  
րիչ բան չի խօսեցաւ. բայց մա-  
տակարարը մինչեւ քանի մը օր  
կերակուր կերցուցած ժամանա-  
կը մեծաւորը պողունքներուն  
վրայ ուռեցած կաշիները կը փր-  
ցունէր, և աչքին պօշովը մա-  
տակարարին անուշ նայվածք մը

կ'ընէր :

Արիտասարդ ասոնք կարդալովք  
այսպիսի հեղութիւնները  
սիրտդ կը շարժեն՝ գիտեմ, միշտ  
նայէ որ երեւելի անձանց վարքը  
կարդաս, և ունեցած անուշու-  
թիւններուն բնութիւնդ յար-  
մարես :

Յ. Ս. Յ.

Տի. Գ. Գ.













